ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«28» օգոստոսի 2017 թ. թիվ 435-Ա

ՀՐԱՄԱՆ

«ԱՈՒԴԻՏ-ՍԹԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՈՒԴԻՏ-ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 22.06.2017 թվականի թիվ 23-07/001386-17 գրության հիման վրա 26.07.2017 թվականի թիվ 03/24-2/13722-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի ընթացքում պարզվել է, որ «ԱՈՒԴԻՏ-ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լիցենզավորմանը (նշանակմանը, որակավորմանը կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրելուն) հաջորդող 1-ամսյա ժամկետում չի հաշվառվել լիազոր մարմնում՝ լիազոր մարմնի սահմանած կարգով, ինչը հանդիսանում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտում:

Ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով, նույն հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008

թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը խախտելու համար «ԱՈՒԴԻՏ-ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ, որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ